ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Է. ԱՎԱՆԵՍՈՎԻՆ

Հարգելի պարոն Ավանեսով.

Ի պատասխան Ձեր 06.11.2019թ. հ.01/411 գրության՝ տեղեկացվում է, որ 2019թ. ընթացքում Հաղթանակ թաղամասի 2-րդ փողոցում իրականացվել է ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ վերանորոգում, ասֆալտի քերուկ է տեղադրվել Հաղթանակ թաղամասի 4-րդ և 2-րդ նրբանցքներում, 4-րդ փողոցի 4-րդ նրբանցքում, 1-ին փողոցի 4-րդ նրբանցքում, Ամառանոցային 1-ին տարածքի երկու փողոցներում, իսկ 11-րդ փողոցից դեպի հ.113 դպրոց տանող ճանապարհին կառուցվել է մայթ և ասֆալտապատվել: Ներկայումս Հաղթանակ թաղամասի 1-ին փողոցում իրականացվում են ասֆալտբետոնե ծածկի փոսային վերանորոգման աշխատանքներ:

Հաշվի առնելով, որ Երևանի քաղաքապետարանի 2019թ. ծրագրերով նախատեսված ասֆալտապատման աշխատանքներն ավարտման փուլում են, ուստի՝ Հաղթանակ թաղամասի մյուս փողոցների ասֆալտապատման աշխատանքները կքննարկվեն Երևանի քաղաքապետարանի 2020թ.-ի ծրագրերը կազմելիս:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ